

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Եղանիմ բայի կրած կերպարանափոխութիւնները.

Սղանիմ բայը, իր հնութեամբ և կրած կերպարանափոխութիւններով, արժանի է մասնաւոր ուշադրութեան:

Հակառակ Հ. Այտընեանի, որ նոյնացնում է այս բայը լինիմ բայի հետ «Պատի և լիւնի փոխարութեամբ», Քնն. քեր. էջ 446, տպ. 1866, պիտի հէնց սկզբից ասենք, որ եղանիմ-ը բոլորովին անկախ բայ է թէ լինիմ-ից և թէ եմ էականից: Սոյն գիտնականի յայտարարութիւնը թէ «Հներն եղ արմատ չէին ճանչնար», իբի, համոզիչ չէ, քանի որ ոչ մի փաստի վրայ չի հիմնուած: Ընդհակառակը լինիմ-ի լեզուարանական վերլուծումը բոլորովին հակառակն է հաստատում: Այսպէս, եթէ լինիմ-ի բուն արմատական մասը բաժանենք նրա յաւելուածական մասերից, կը տեսնենք, որ այս բայի նախնական ձեզ պէտք է եղած լինի *լէ-ն-իմ, որովհետեւ է ձայնաւորն է միայն, որ շեշտի կորուսման դէպքում կարող է փոխուել ի-ի. իսկ եթէ հնագոյն կամ, լաւ ես, նախնական ձեն ենթադրենք լինիմ, դասականում պիտի սպասէինք *լիմ: Յամենայն դէպս ոչ *լէ-, ոչ լի- եղանիմ-ի մէջ որոնել չենք կարող. այս վերջինի արմատական մասն է եղ, որ կարող էր նախդասական շրջանում եղած լինել *իդ՝ այն հիման վրայ, որ դասականում պահուած մի շարք հինաւուրց բառերի մէջ եղ-ը փոխարինում է մի հնագոյն *իդ-ի, օր. ասեղն, որից ածանցուած է ասդանի (=*ասդանի) և ոչ ասեղանի (հայերէնում եղ-ը ի-ի փոխուել չի կարող), թիրեղն փոխ. *թիրիդն, որից և յոգ. ուղղ. թիրդունք և ոչ թիրեղունք: Ամեն անգամ երբ եղ-ը չի փոխարինում *իդ-ի, և ձայնաւորը շեշտի կորուստից յետոյ էլ պահում է իր ինքնուրունութիւնը, ինչպ. աղեղն, սեռ. աղեղան, յոք. ուղ. աղեղունք:

Այս համառօտ ակնարկից յետոյ մնում է ասել, որ թէ լինիմ, թէ եղանիմ երկուսն էլ հաւասարապէս գործ են ածուած դասական մատենագրութեան մէջ. օր. եզն. «Երկու անարարաց ի միասին չէ մարք լինել»: դարձեալ եզն. «Որոց ծնունդն ի միում ժաման չեն, եւ մասեն ի միասին եղանին»: Աւելորդ է ասել, որ օրինակների թիւը, երկուսի վերաբերմամբ էլ, կարելի էր չափազանց մեծացնել, եթէ անհրաժեշտ թուէր:

Հ. Այտընեանի բացադրութիւնը—«Պատի և լիւնի փոխարութեամբ» ճիշտ չէ. բնիկ հայերէն բառերի վերաբերմամբ, այն ևս դասական ուղղագրութեան մէջ, լ-ի և դ-ի շփոթութիւն չկայ.

Պ-ը 1-ին փոխարինում է շատ որոշ հանգամանքներում, յատկապէս այնպիսի երկբարբառներից յետոյ, որոնք կազմուած են չկիսաձայնով, օր. նօյդ կամ նօյլ, բոյդ կամ բոյլ, այդ կամ այլ, Թորայէղ (= *Թորայեղ) կամ Թորայէլ, ևն. և հէնց այս պարագային դի արտասանութիւնն անտարակոյս նոյնը չէր, ինչ որ ուրիշ բառերի մէջ, և այդ պատճառով էլ հնագոյն ձեռագրերում պատահում ենք մի մտկակէտի (‘), դրուած դի վրայ, օր. այդ, բոյդ, ևն:

Ճիշտ է, մեր այսօրուայ Պ-ը Ե. դարում արտասանուել է 1 բայց ոչ այնպէս ինչպէս այն ժամանակուայ հայերէն 1-իւնը, այլ ինչպէս նոյն շրջանի յունական և-ն կամ ասորական և պարսկական 1-ը, այնպէս որ ոչ Ե. դարում ոչ նոյնիսկ կիլիկեան շրջանի ոկիզբներում (Ժ դար) դի և 1-ի փոխատրութիւն տեղի ունենալ չէր կարող:*

Եղանիմ-ն, ասացինք, շատ հին բառ է. նրա ստուգաբանութիւնն անծանօթ է ինձ. սակայն նա, ենթարկուելով հանդերձ այլ և այլ կերպարանափոխութեանց, պահել է իր գործածութիւնը մեր բոլոր բարբառներում, բացառութեամբ մէկի, Ակնայ: Վերջին բարբառաբանական մի քանի սեմինարեան նիստերում, առիթ ունեցայ, մասնակցող ուսանողների միջոցով, ծանօթանալու այն բազմազան ձևերին, որոնք, իրար լրացնելով, հնարաւոր են դարձնում, գէթ որոշ չափով, մէկ կողմից վերականգնել նրա նախդասական վիճակը, միւս կողմից ցոյց տալ այն աստիճանական զարգացումը, որին ենթարկուել է: Ամենից ուշագրաւն այն է, որ բարբառներից մեծ մասում եղանիմ-ը ներկայանում է իրեն մին այն հազուագիւտ բառերից, որոնց մէջ, որոշ բարբառներում, Պ-ը պահել է իր դասական արտասանութիւնը, ոմանց մէջ միայն ներկայի, իսկ ոմանց մէջ և՛ ներկայի և՛ կատարեալի (առրիստ) բներում: Այսպէս, աւմ ճիւղի բարբառներն անխտիր բոլորն էլ պահել են և արտասանութիւնը փոխ. Պ-ի, օր.

Էլեմ, ըլլեմ, էլա, էլամ, ևն.

Կը ճիւղի կամ արևմտեան կոչուած հայ բարբառներից մեծ մասում նախկին եղանիմ-ը միայն ներկայի բնում է պահպանել Պ-ի և արտասանութիւնը, մինչդեռ մնացած բարբառներում և՛ ներկայի և՛ կատարեալի բներում Պ-ն իսպառ կորցրել է իր նախկին ձայնը: Առաջին խմբի ներկայացուցիչներն են՝ Վան, Տիգրանա-

*) Դասական շրջանում Պ-ի և՛ 1-ի կիրառութեան մասին աւելի լոնդամակ խօսում է Մլյէն «Remarques sur les 1 de l'arménien classique...խորագրով յօպուածում, տ. ՅՈՒՆԱԲԶԱՆ, էջ՝ 209—214».

կերտ (մասամբ միայն), Խարբերդ—Երզնկա, Շաբին—Կարահիսար, Տրավիզոն, Համշէն, Մալաթիա, Ջէյթուն, Սիւրիա, Արարկիր, Սերաստիա, Եւգոկիա, Զմիւռնիա, Նիկոմիդիա, Պոլիս, Ռոտոսթօ, Խրիմ, Աւատրո-Հունգարիա, Ինչպ. Ըլլալ—Էղա, ևն. Երկրորդ խմբի ներկայացուցիչներն են՝ Մուշ, Կարսոյ բարբառից՝ Ալեքսանդրոսը, Ղփչաղ գիւղ, Արդիք գիւղ, Տիգրանակերտ քաղաք, օր. Էղեիլ—Էղած, ևն.

Ծան. Ակնայ բարբառը որ ուրիշ շատ կռղմերով ա. Խմբին է պատկանում, ներկայ դէպրում հանդէս է բերում մի ուշագրաւ շեղում. այստեղ ներկայի բնում փոխանակ եղանիմ-ի նախկին լինիմ բայն է պահպանուած լրենիմ ժեւով։ Խակ Զէյթունի բարբառում պահուած է լինիմ-ի միայն հրամայական լեռ-ը լայ ժեւով։

ՍԼ*) ճիւղի բարբառներն, ինչպէս աշխարհագրական դիրքով այնպէս և եղանիմ-ի վերաբերմամբ, բաժանւում են երկու մասի. առաջինը Պարսկաստանում խօսուածներն են—Մարաղան և Խոյը, երկրորդը՝ Արթուրինի բարբառն է։

Մարաղան և Խոյը այս հարցում միանգամայն համերաշխ են —ում ճիւղի բարբառների հետ, այսինքն և՛ ներկայի և՛ կատարեալի բներում պահպանուած է և ձայնը փոխանակ դի։

Օր. Խոյ՝ ներկ. բն. կրէմ**), կատ. բն. ըլամ (=եղայ)

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, այս բայի վերաբերմամբ բուն արեկելեան բարբառներն, այն չ' Երևան, Ղարաբաղ, Շամախի, Աստրախան, Զուղա, Ագուլիս, Թիֆլիս, Մարաղա և Խոյ, կազմում են մի Ա խուրք, ուր թէ ներկայի և թէ կատարեալի բնում տեսնում ենք և կամ թից, ձայնական նոյնացման օրէնքով, առաջացած 6 (օր. Ղար. Մարդակերտ գիւղ՝ ընենիւմ ըմ [² լինիւմ բմ]): Արևմտեան բարբառների ստուար մեծամասնութիւնը, (կը ճիւղի

*) Ըստ պ. Աճառեանի, Մարաղայի (Ենթաք. Ուրմի), Խոյի (միասին առած նաեւ Սալմաստ եւ Մակու, ինչպէս եւ 1828-ին Արևսաստանում հաստատուած 15-ի չափ Խոյից դադթած դիւղական համայնքներ) եւ Արթուրինի բարբառները, որոնց մեջ սահմ. ներկան ու անկատարը կազմը ունորոշ եղանակի եղ վերջաւորութեամբ, կազմում են առանձին ճիւղ։ Մանրակրկիտ քննութիւնից յետոյ միայն կարելի կը լինի բառարմանույն զնահատել յարկելի բարբառագէտի սոյն հնթաղրութիւնը։ Առայժմ հիմնում ենք իր տեսութեան վրայ։

**) Այս օրինակները վերցնում եմ սեմինարական աշխատութեանց մասնակից ուսանող Յակոբ Մանուկեանից Երեւանի Գալուլար գիւղից. Վերջինիս բնակիչները գաղթել են Խոյից 1829-ին։

Ա. խումբ) կազմում է Յ խումբ, ուր ներկայի բռնն է միայն պահել և ձայնը: Իսկ Ծ խումբին պատկանում են շատ քիչ բարբառներ, այն է՝ ամբողջ Մուշի բարբառն ու Կարնոյ և Տիգրանակերտի բարբառներից որոշ հատուածներ:

Այժմ մնում է բայի ամբողջ պատկերը բարբառային ծանօթձերի համադրութեամբ, որ միջոց կը տայ ոչ միայն դիտելու ձեւերի աստիճանական առաջնադրութիւնը, այլ և տեսնելու նոյնական նախդասական ձևեր:

Ն Ե Ր Կ Ա Յ Ի Բ Շ Ե Ր.

I.

Թասակ. **Ալիքսանդրօպոլ** **Վաղարշապատ** **Օխալքալակ**

(Սէօգիւղիւ գիւղ՝ և նունիմ)	(Ղուլուղի, Փոքը Գէօնդիւրէ գ.)
-------------------------------	----------------------------------

Էղ-ան-իմ	Էղ-ն-իմ	ըլ-ն-էմ	ըլ-լ-իմ (<*ըլ-ն-իմ)
—իս	—իս	—էս	—իս
—ի	—ի	—ի	—ի
—իմք	—ինք	—էնք	—ինք
—իք	—իք	—էք	—իք
—ին	—ին	—էն	—ին.

Երեւան բաղ.

Եւղոկիա

Պօլիս

ըլ-էմ (և ըլ-ն-էմ, ըն-ն-ամ (<*ըլ-նամ) ըլ-լ-ամ (<*ըլ-ն-ամ)	ըլ-աս	ըլ-աս
—էս (ըլ-լ-եմ)	—աս	—աս
—ի	—ա	—ա
—էնք	—անք	—անք
—էք	—աք	—աք
—էն	—ան	—ան.

II.

Թասակ.

Ալիքսանդրօպոլ

Վաղարշապատ

Օխալքալակ

Էղ-ան-եի	Էղ-ն-էի	ըլ-ն-էի	ըլ-լ-էի
—եիր	—էիր	—էիր	—էիր
—էր	—էր	—էր	—էր
—եաք	—էինք	—էինք	—էինք
—եիք	—էիք	—էիք	—էիք
—եին	—էին	—էին	—էին

Երեւան բաղամ	Եւղոկիա	Պօլի.
ըլ-էի (նաև ըլ-ն-էի, ըլ-լ-էի)	ըն-ն-այի	ըլ-լ-այի
—էիր	—այիր	—այիր
—էր	—ար	—ար
—էինք	—այինք	—այինք
—էիք	—այիք	—այիք
—էին	—ային	—ային+

III.

Դասակ.	Ալէխանդրովով	Վաղարօսպատ	Ախալքալակ
եղ-ան-իլ	էղ-ն-էլ	ըլ-ն-էլ	ըլ-լ-իլ
(յետդասակ.			
եղ-ան-իլ)			

Երեւան բղ.	Մազրա, Ներք. Ազա, Խոյ,	Եւղոկիա	Պօլիս
ըլ-ն-իլ	ըլ-ր-իլ	ըլ-էլ	ըն-ն-ալ

IV.

Դասակ.	Ալէխանդրովով	Վաղարօսպատ	Ախալքալակ
մի եղ-ան-իր	մի էղ-ն-ի		
մի եղ-ան-իք	միք էղ-ն-ի (^{<*} մի եղ-ն-իք)		
Վաղարօսպատ			
մի ըլ-ն-ի (նաև մի ըլ-լ-ի, բնից)	մի ըլ-լ-իր		
մի ըլ-ն-էք	մի ըլ-լ-էք		
Երեւան բաղամ	Եւղոկիա	Պօլիս	
մի ըլ-ն-ի (նաև մի ըլ-լ-ի, մի ըլ-ի)	մի ըն-ն-ար	մըլ-լ-ար	
	մի ըն-ն-աք	մըլ-լ-աք	

կ ա ս ա ր ե ա լ ի թ ն ե ր .

I.

Դասական	Ալէխանդրովով	Եւղոկիա	Պօլիս Մազրա
եղի-ջիր (^{<*} եղէ-ջիր)	էղ-իր	էղ-իր	էղ-իր ըլի
եղի-րուք (^{<*} եղի-արուք)	էղ-էք	էղ-էք (կամ էղիք)	էղ-էք ըլէք
Վաղարօսպատ	Երեւան	Ներքին Ազա	
իլ (արգել. մի իլ)	իլ (նաև ըլի)	յիլ (մի յիլ)	
էլէք	էլէք	յիլէք	
Դաշտար. Մարդուկեան	Մարտարա		
	(ըստ Աճ. Հ, բրբուդ.		
	յիլ, յէլ. էջ՝ 284, 285)		

		II.	Դարակ Առաջնորդ
Պասական		Ալեքս., Ախալ., Եւդ. Պօլ.	
եղէ (<*եղեյ), յետդաս, եղայ		էղ-ա	
եղեր		—-ար	
եղեւ		—-ավ	
եղեաք, եղաք		—-անք	
եղէք		—-աք	
եղեն		—-ան	
Վաղր. Մազ. Նր. Ազա		Խոյ	
էլ-ամ (Մազրա՝ նաև էլա)		ըլ-ամ	
—-ար		—-ար	
—-աֆ		—-ավ	
—-անք		—-անք	
—-աք		—-աք	
—-ան		—-ան	
Սամաղար (Վաղարշապատի մօտերը գ.)			
իլա			
իլար			
իլաֆ			
իլանք			
իլաք			
իլան.			
III.		Դարակ Առաջնորդ	
Պասակ. Ալեք. Ախալք. Վաղարծ. Երեւ. Մազրա, Խ. Ազա	Խոյ		
եղ-եալ էղ-էլ (էղ-ած) ել-ել (էլ-ած) էլէլ (էլ-ած) ըլ-իր (օր. ըլ-իր էմ=			
Վարար. Մարգարեր			
ըլ-ալ (օր. ըլ-ալ ըմ= եղել եմ)			
Ակներե է, որ սոյն աղիւսակի մէջ ամենից կնճռոտ երեսյթ ները ներկայացնում են կատարեալի բները, այն ևս յատկապէս սահմանական կատարեալի, դաս. եղէ, եղեր, են, և հրամայականի մէջ, դասկ. — (իսկապէս չունի, եղի-ջիր-ը բարդ ձև է) և օր. Ալէքսանդրոպոլ էղիր:			
Պասական սահմ. կատարեալի բոլոր դէմքերը մի ևնոյն բուշ նը չեն ներկայացնում. եղ-եր, եղ-ամ, եղ-էք, եղ-են ձեերի մէջ ակներե է եղ-բունը, ինչպէս հաս-եր, հաս-ամ, ևն ձեերի մէջ հաս բունը:			

Պասական սահմ. կատարեալի բոլոր դէմքերը մի ևնոյն բուշ նը չեն ներկայացնում. եղ-եր, եղ-ամ, եղ-էք, եղ-են ձեերի մէջ ակներե է եղ-բունը, ինչպէս հաս-եր, հաս-ամ, ևն ձեերի մէջ հաս բունը:

Եղ-է ձեւ կարող էր առաջանալ կամ մի հնագոյն եղ-ել-ից, քանի որ է-ն հաւասար է ել-ի և այս դէպօւմ կը լուսաբանուի նաև եզ. Բ. դէմքը՝ եղեր <*եղեյեր <*եղեեր), բայց փոխարէն մութն է մնում եղիչիր ձեւ, որ միայն *եղէ-ջիր-ից կարող էր ծագել և եղերուն ձեւ, որ պէտք է նախապէս եղած լինէր *եղի-արուք:

Դալով բարբառներին, այստեղ բոլոր սահմ. կատարեալները եղա, ելա, ևն, հանդէս են բերում եղ—կամ ել—րունը, որին դասականում պիտի համապատասխանէր *եղ—, այս ենթագրութիւնը ոյժ է առնում եղ-իր, իլ, ևն բարբառային հրամայականից: Բարբառներից սակայն մէկը—Մազրան (Զանգեզուրի գաւառ, Խոյի գաղթականութիւն) հրամայական եզ. Բ. դէմքում ներկայացնում է մի ծանրակշիռ շեղում: Մազրացւոց թի-ն եթէ հրամայական է, ուրիմն և կատարեալի բուն է և կարող է համապատասխանել դասական *եղի-ի, որով միայն կը լուսաբանուի և եղերուք:

Ինչպէս տեսնում ենք կատարեալ ժամանակները մի հատիկ բնից չեն կազմուած, այլ ներկայացնում են խանուրդ մի քանի տարբեր բների:

Ա խմբի հրամայականների մեծամասնութիւնը մի աւելի հին ներկայի բուն է մատնանշում քան դասական եղանիմ-ն է (բունը՝ եղ-ան-ի-, վերջաւորութիւնը՝ -մ). եթէ հաս հրամայականի սահմ. ներկան հատանիմ է, իսկ հաս-իր-ինը՝ հատանիմ, պարզ է ուրեմն, որ ի՛ կամ *եղ հրամայականի սահմ. ներկան էլ պէտք է լինի *եղանիմ և ոչ եղանիմ. իսկ եղանիմ-ը եղիր-ի սահմ. ներկան է:

Աւելորդ չհամարուի ասել, որ Ա խմբի բարբառներից նրանք, որ կատարեալի բնում ունին իլ— կամ թլ—, փոխ. ել— ամենից աւելի իրաւունք ունին պարծելու իրանց հնութեամբ, ենթագրելուալով, որ նախդասական ձեւն էլ պէտք է եղած լինէր *իղ-ան-եմ:

Մեսրոպ վարդ. Մաքուղեանց.

